

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

DOI: [https://doi.org/ 10.59630/25792644-2025.1.28-68](https://doi.org/10.59630/25792644-2025.1.28-68)

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ձեռքբերումներ և բացթողումներ)

ՄԻՔԱՅԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Վ.Բրյուսովի անվ. պետական համալսարանի
կառավարման ամբիոնի պրոֆեսոր
ԳԱԲՐԻԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
ՀՊՏՀ ֆինանսական հաշվառման
ամբիոնի դոցենտ

Բանալի բառեր - մրցակցության պաշտպանություն, Հանձնաժողով, տարեկան ծրագիր, տարեկան հաշվետվություն, ձեռքբերումներ, բացթողումներ:

Ներածություն

Առևտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցելու պարտադիր պայմաններից մեկը ՀՀ-ում «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետև՝ Օրենք) ընդունումն էր¹: Սակայն այն ընդունվել է միայն 2000թ. նոյեմբերի 6-ին, ուժի մեջ է մտել դեկտեմբերի 15-ին (05.12.2000թ., ՀՕ -112): Օ-

1 «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» 2000 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-112 օրենքի վերնագիրը ս.թ. հուլիսի 3-ին «մրցակցության» բառից հետո լրացվել է «և սպառողների շահերի» բառադարձությամբ (14.07.2025, ՀՕ-205-Ն):

րենքի ընդունումը ենթադրում էր նաև դրա համապատասխանությունը միջազգային այլ պայմանագրերին: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, և մյուս կողմից՝ Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների (15 երկիր) միջև դեռևս 1996 թ. ապրիլի 22-ին ստորագրված և 1999թ. հուլիսի 1-ին ուժի մեջ մտած «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը»: Հայաստանը՝ որպես ԱՊՀ և Եվրասիական միության անդամ երկիր, պարտավոր է նաև մրցակցության պաշպանության օրենսդրությունը համապատասխանեցնել այդ կառույցների իրավական ակտերին: Վերոհիշյալների մասին են վկայում, օրինակ, Մրցակցության մասին օրենսդրության իրացման նպատակներով Եվրահանձնաժողովի ծանուցումը համապատասխան շուկայի որոշման վերաբերյալ (97/A.372/03), ԱՊՀ երկրների միջև 2000 թվականի հունվարի 25-ին կնքված՝ «Համաձայնեցված հակամենաշնորհային քաղաքականությունն վարելու մասին» պայնագիրը, «Մրցակցության մասին» մոդելային օրենքի վերաբերյալ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշումը (24.10. 2013, թիվ 50, Մինսկ):

Տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական մարմինն իր գործունեության ընթացքում ունեցել է հաջողություններ և բացթողումներ: Այս ընթացքում Օրենքում կատարվել են մեծ թվով (27) փոփոխություններ և լրացումներ (որոնցից 10-ում միայն փոփոխություններ են կատարվել, իսկ 1-ում՝ միայն լրացումներ), որոնք իրենց ազդեցությունն են թողել այդ մարմնի գործունեության վրա (դրական և բացասական): Սույն հետազոտության նպատակն է՝ անդրադառնալով տարբեր ժամանակահատվածներում այդ մարմնի գործունեությանը, ներկայացնել դրանում առկա դրական դրվագները, վեր հանել նկատված գործնական ու օրենսդրական բացթողումները և պետական մարմնի ու օրենսդրի ուշադրությունը հրավիրել դրանց առթիվ ներկայացված եզրակացություններին:

Հիմնական բովանդակությունը

Շուտով (2026 թվականի հունվարի 13-ին) կլրանա ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) ստեղծման 25- ամյակը: Շա՞տ է, թե՞ քիչ: Համեմատության համար նշենք, որ 1890 թվականի հունվարի 1-ից ԱՄՆ-ում Շերմանի (հակատրեստային) օրենքը ուժի մեջ մտնելուց հետո, դրա դրույթների առաջին գործնական փորձարկումները դաշնային մակարդակով իրականացվել են միայն 1901 թվականից հետո՝ ԱՄՆ-ի 26-րդ նախագահ Թեոդոր Ռուզվելտի պաշտոնավարման տարիներին: Այսինքն, Օրենքի ընդունումից գրեթե 12 տարի հետո:

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետև՝ Հանձնաժողով), իր գործառույթների իրականացմամբ զբաղվել է ձևավորվելուց անմիջապես հետո¹: Դեռևս 2001 թվականի մայիսին Հանձնաժողովը շուկայի մուտքի խոչընդոտի վերացման որոշում կայացրեց: Մասնավորապես, <<ջերմուկ>> հանքային ջրի շշալցմամբ զբաղվող 6 տնտեսավարող սուբյեկտներից ստացված բողոքների հիման վրա կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ <<ջերմուկ>> հանքային ջուր արդյունահանող <<Ադամանդ-Կ>> ՍՊԸ-ն երկու տարի շարունակ Վայոց ձորի մարզպետարանի ցուցումով հրաժարվել է հանքային ջուր վաճառել մարզի տարածքից դուրս գտնվող շշալցմամբ զբաղվող ընկերություններին: Ստացվում է, որ մարզպետարանի վարչական խոչընդոտների պատճառով, մի շարք փոքր և միջին ձեռնարկությունների համար խախտվել է ազատ և արդար մրցակցելու հնարավորությունը հանքային ջրերի շուկայում: Հանձնաժողովի որոշմամբ, <<Ադամանդ-Կ>> ՍՊԸ-ին տրվել է նախազգուշացում և

¹ Օրենքի 17-հոդվածի համաձայն, 2001 թվականի հունվարի 13-ին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվեցին հանձնաժողովի 7 անդամ (ներառյալ՝ նախագահը և նրա տեղակալը):

հանձնարարվել վերականգնել հանքային ջուր շշալցնող այդ ձեռնարկությունների իրավունքները:

Նշված հիմնախնդիրը այդ տարիներին հատկապես բնորոշ է եղել հետխորհրդային երկրներին: Փոքր ձեռնարկությունների ներկայացուցիչների Համառուսաստանյան երկրորդ համագումարում ՌԴ-ն հակամենաշնորհային քաղաքականության և ձեռներեցության աջակցության նախարար Ի.Յուժանովը վարչական խոչընդոտները համարել է առավել հրատապ հիմնահարց և դրանց վերացումը՝ նախարարության հիմնական խնդիրը¹: Ուկրաինայի Խարկովի մարզի տարածքային մարմինը միայն 2001 թվականին կանխարգելել է իշխանության մարմինների կողմից տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ խտրական վերաբերմունքի դրսևորման 69 դեպք²:

Հետագա մի քանի տարիներին Հանձնաժողովի գործունեության շնորհիվ բացահայտվել են անբարեխիղճ մրցակցության, գերիշխող դիրքի չարաշահումներին և հակամրցակցային համաձայնություններին առնչվող մի շարք իրավախախտումներ:

Օրենքի ընդունումից հետո առաջին 5-6 տարիներին Հանձնաժողովը ձևավորվեց ու կայացավ, և նրա գործունեությունն, ընդհանուր առմամբ, կարելի է դրական գնահատել: Հանձնաժողովի գործունեության կարևոր գնահատականներից մեկը՝ բաց, հրապարակային և թափանցիկ գործունեության համար Հայաստանում Միացյալ Թագավորության դեսպանատան և ԱՄՆ-ի՝ միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ անցկացվող ամենամյա մրցանակաբաշխության ժամանակ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը՝ որպես լավագույնս կիրառած պետական գերատեսչություն ճանաչելն է, որի համար որպես թափանցիկությո-

¹St' u II Всероссийский съезд представителей малых предприятий: Документы и материалы съезда, с. 18

² **Нагнивц В.А.**, Субъекты хозяйствования и дискриминация власти, Конкуренция, Вестник антимонопольного комитета Украины, 2002, N 1, с.44.

յան խորհրդանիշ՝ «ոսկե» բանալի և վկայական է հանձնվել Հանձնաժողովին (09.12.2005թ.)¹:

Օրենքի 6-րդ հոդվածում կարևոր լրացում է կատարվել (28.06.2002). Հանձնաժողովի իրավասությունների մեջ ավելացել է գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանի վարման կարգը սահմանելու իրավասությունը (24.06.2002, ՀՕ-398): Այս իրավասության շնորհիվ Հանձնաժողովը հնարավորություն է ստացել հիմնականում կանխարգելել գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների չարաշահումները: Նույն հոդվածը 2007 թվականին (22.02) խմբագրվել է (23.03.2007, ՀՕ-107), որի նոր՝ 3-րդ և 4-րդ մասերում ամրագրվել են 2 և 3 տնտեսվարող սուբյեկտների համատեղ գերիշխող դիրք ունենալու պայմանները: Դրա շնորհիվ հնարավորություն է ստեղծվել զգալի թվով հակամրցակցային համաձայնություններ կանխարգելել:

Հայաստանի իշխանության պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հետագայում երբեմն վարչական խոչընդոտներ կամ խտրական պայմաններ են ստեղծել մրցակցող ֆիրմաների համար՝ խաթարելով ազատ և արդար մրցակցությունը:

Վերոհիշյալ խնդիրը մասամբ լուծելու համար, ինչպես տարբեր երկրների օրենսդրություններով է նախատեսված, օրենսդիրը 2011 թվականի ապրիլի 12-ին Օրենքում լրացում է կատարել (Հոդված 16.3)², որով արգելվել է պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց հակամրցակցային գործողությունները կամ վարքագիծը:

¹ Մրցանակաբաշխությունը նվիրված էր կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրվան: Մրցանակաբաշխության արդյունքները որոշել է տեղեկատվության ազատության ոլորտում գործող յոթ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից բաղկացած ժյուրին (տե՛ս <https://competition.am/wp-content/uploads/2022/03/Report2005.pdf>):

² Այդ մասին առավել հանգամանալից տե՛ս Մ.Վ.Միքայելյան, Տնտեսական մրցակցության և մենաշնորհների պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Եր. 2005, էջ 168-169:

Հանձնաժողովի գործունեության մեջ նկատվել է մեկ մասնագիտական սխալ, որը հետագայում էլ կրկնվել է: Մասնավորապես, ասվածը վերաբերում է ապրանքային շուկաների սահմանների որոշմանը: Հանձնաժողովի ձևավորման առաջին տարում, առնվազն երկու ապրանքային շուկաների վերլուծության ժամանակ, ապրանքային շուկայի ապրանքատեսակային¹ սահմանը ճիշտ չի որոշվել: Օրինակ, սիգարետների ամբողջ տեսականին Հանձնաժողովի կողմից ներառվել էր 2 շուկայում՝ ֆիլտրով և առանց ֆիլտրի: Մինչդեռ բազմատեսակ սիգարետներ կան (մասնավորապես՝ ֆիլտրով), որոնց գները միմյանցից տարբերվում են մի քանի անգամ: Հետևաբար, ֆիլտրով սիգարետների ամբողջ ծավալը մեկ ապրանքային շուկայում դիտարկելիս արհեստականորեն կմեծացվի շուկայի ծավալը, իսկ դրա մասնակից տնտեսվարողների բաժինները կնվազեցվեն:

Նույն մոտեցումն է ցույց տրված նաև դեղորայքի շուկան ուսումնասիրելու պարագայում: Ամբողջ դեղորայքը (հակաբորբոքային, ցավազրկող, հակաալերգիկ և այլն) ընդգրկվել է մեկ ապրանքային շուկայում: Եվ պատահական չէ, որ ուսումնասիրության արդյունքում ոչ մի գերիշխող դիրք ունեցող սուբյեկտ չի արձանագրվել²:

Ի դեպ, նույնանման սխալներ առկա են որոշ գիտական հետազոտություններում: Օրինակ, «կարագ», «պանիր», «թռչնի միս», «եր-

¹ Մինչև հանձնաժողովի աշխատակազմի ձևավորումը, ՀՀ նախագահի հրամանագրով նշանակված անդամները, ժամանակ շահելու նպատակով, «նոր հեծանիվ չհորինելու համար» աշխատանքային կարգով առաջարկեցին մասնագիտությամբ 3 տնտեսագետ անդամներին ռուսերենից թարգմանել ապրանքային շուկաների վերլուծության համար անհրաժեշտ կարգերը: Հանձնաժողովի այն անդամը, որը հանձն էր առել թարգմանել «Ապրանքային շուկաների որոշման կարգը, «продуктовые границы рынка»-ն թարգմանել էր՝ «շուկայի մթերքային սահման»: Քննարկումից հետո «մթերքային» բառի փոխարեն ընդունվեց «ապրանքատեսակային» եզրույթը:

² Տե՛ս Հանձնաժողովի 2001 թվականի տարեկան գործունեության հաշվետվություն, https://competition.am/wp-content/uploads/2022/03/Report_2001.pdf:

շիկ» «նրբերշիկ» և «հավի ձու կճեպով» ապրանքային շուկաների ուսումնասիրության ժամանակ¹:

Որոշ հետազոտություններում ոլորտը և ապրանքային շուկան նույնականացրել են: Մասնավորապես, հետազոտության հեղինակները նշել են. «2018 թվականի 1-ն եռամսյակի տվյալներով մանրածախ առևտրի ոլորտում գերիշխող դիրք ունեն հետևյալ ընկերությունները...»²: Օրենքում³

Իրենց գործունեության ընթացքում նույնանման սխալներ թույլ են տվել նաև հետխորհրդային երկրները:

Շատ դեպքերում անօրինական գործունեության մեղադրանքը կարող է հերքվել միայն ապրանքատեսակային և աշխարհագրական սահմանները այլ կերպ որոշելով: Բոլոր այլ հավասար պայմաններում, այս սահմանները որքան լայնորեն են որոշված, այնքան փոքր է առանձին վաճառողի շուկայական մասնաբաժինը և, հետևաբար, գերիշխող դիրք զբաղեցնելու հավանականությունը¹:

Հանձնաժողովի գործունեության հետագա հինգ տարիները աչքի են ընկել, մի կողմից, Հանձնաժողովի գործունեության պասսիվությամբ, մյուս կողմից, նվազել է նրա աշխատանքի դրական արդյունքը: Մասնավորապես, նույն տնտեսվարող սուբյեկտը պարբերաբար կատարում է միևնույն իրավախախտումը: Այսպես, 2009 թ. <<Ալեքս գրիգ>> ՍՊԸ-ն 4 անգամ կատարել է Օրենքի 12-րդ հոդվածով (Տնտեսվարող սուբյեկտի կամ նրա գործունեության վերաբերյալ շփոթություն առաջացնելը) սահմանված իրավախախտումը (տե՛ս 22.04.2009թ. թիվ 48-Ա որոշում, 05.11.2009 թիվ 82-Ա-ից 84-Ա

¹ **Հովհաննիսյան Դ. Ա.**, Մրցակցային միջավայրը և դրա կարգավորման ուղիները Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտում, Եր., 2023, 76-151 էջեր:

² Տե՛ս **Արտակ Շաքոյան, Արման Մանասերյան**, Մանրածախ առևտրի ոլորտում մրցակցության խնդիրները և դրանց լուծման ուղիները, Բանբեր Հայաստանի պետական համալսարանի, 2018, թիվ 3 (51), 47-56 էջեր:

³ Ոչ միայն ՀՀ Օրենքում, այլև՝ մրցակցության պաշտանության օրենսդրություն ունեցող բոլոր երկրների օրենքներում:

որոշումներ), որոնց համար Հանձնաժողովը տնտեսվարողին տուգանել է 500 հազարական դրամով (հոդված 36, 5-րդ մաս, 1-ին պարբերություն): Մինչդեռ Հանձնաժողովը պարտավոր էր 82-Ա-ից 84-Ա որոշումներում տուգանքի չափը սահմանել մեկական մլն դրամ՝ նկատի ունենալով միևնույն խախտումը մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը (հոդված 36, 5-րդ մաս, 2-րդ պարբերություն): Նույն սուբյեկտի կողմից նմանատիպ 5 խախտում էլ արձանագրվել է Հանձնաժողովի՝ 2010 թվականի մայիսի 19-ի դոնբաց նիստում (թիվ 56-Ա-ից 60-Ա որոշումներ), և նորից Հանձնաժողովը թերացել է իր իրավասություններում՝ տուգանք սահմանելով ընդամենը 500 հազարական դրամ: Մինչդեռ անբարեխիղճ մրցակցության դրսևորումը մեկ տարվա ընթացքում կրկնվել է: Հետևաբար, տուգանքի չափը պետք է լիներ մեկական մլն դրամ (տե՛ս 04.05.2005թ. մայիսի 4-ի Օրենքի փոփոխությունները և լրացումները 31.05.2005, ՀՕ-91):

Առանձին տնտեսվարողների կողմից նույնատեսակ իրավախախտումների բազմակի կատարմանը նպաստել է ոչ միայն Հանձնաժողովի բարյացակամ վերաբերմունքը, այլև՝ օրենսդրի կողմից առանձին օրենսդրական փոփոխությունները: Մասնավորապես, Օրենքի 37-րդ հոդվածի (Խախտումով ստացվող շահույթը) խմբագրումը (Հանձնաժողովի որոշումը չկատարելը, խմբ. 31.05.2005 ՀՕ-91-Ն), որը հետագայում ուժը կորցրել է (12.04.2011 ՀՕ-137-Ն): Նախկինում իրավախախտող սուբյեկտը Հանձնաժողովի որոշմամբ պարտավոր էր խախտումով ստացած շահույթը փոխանցել պետական բյուջե: Նշված հոդվածի խմբագրումից հետո տնտեսվարողին որոշակի դեպքերում ձեռնտու էր Հանձնաժողովի նշանակած տուգանքը վճարելը և նույն իրավախախտումը շարունակելը²:

¹ С.Авдашева, А.Шаститко, Экономический анализ в делах о нарушении закона «О защите конкуренции», Вопросы экономики, 2011, N 2, с. 124.

² Խոսքը վերաբերում է միայն անբարեխիղճ մրցակցությանը:

Որոշակի սխալներ և բացթողումներ նկատվել են նաև Հանձնաժողովի գործունեության երկրորդ տասնամյակում: Մասնավորապես, որոշ դեպքերում Հանձնաժողովը տարբեր տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ նույն խախտման համար տարբեր պատժամիջոցներ է կիրառել: Այսպես, օրինակ, 2011 թ. օգոստոսի 5-ի նիստում ձեռք, մարգարինի և «սպրեյի» շուկաների վերաբերյալ տեղեկատվությունը 9 օրով ուշացնելու համար <<Լիա-Կ Գրուպ>> ՍՊԸ-ին տուգանել է 200 հազարական դրամով (326-Ա, 327-Ա և 328-Ա որոշումներով): Տվյալ գործում հետաքրքիրն այն է, որ Հանձնաժողովը պահանջվող տեղեկատվության համար ընդամենը 5 օր էր սահմանել (2011 թվականի ապրիլի 20-ի դռնբաց նիստում՝ թիվ 133-Ա-ից 136-Ա որոշումներով): Համանման տեղեկատվություն (միայն բուսական յուղի հետ կապված) տնտեսվարող սուբյեկտներից դեռևս պահանջվել է 2004թ. ապրիլի 30-ին (որոշում 47-Ա)՝ ներկայացնելու ժամկետ սահմանելով 7 օր: Տրաֆանությունը հուշում է, որ Հանձնաժողովը պատասխանատվության միջոց պետք է կիրառեր առնվազն մայիս ամսի երկրորդ կեսին (մինչև մայիսի 22-ը տուգանքը 500 հազար դրամ էր, մայիսի 23-ից՝ մինչև 5 մլն դրամ): Մինչդեռ պատասխանատվության միջոց կիրառվել է օգոստոսին (վերոհիշյալ 3 որոշումներից յուրաքանչյուրով՝ ընդամենը 200 հազարական դրամ տուգանք):

Ի դեպ, տուգանքի հարցում մեղքի իր բաժինն ունի նաև օրենսդիրը՝ Օրենքում իր 12.04.2011 ՀՕ-137 փոփոխությամբ ոչ միաբժեքություն ստեղծելով նշանակվող տուգանքների մեծությունների մեջ (մինչև հինգ մլն, մինչև 1 տոկոս և այլն): Դրանով մեծացել է կոռուպցիոն ռիսկը¹:

¹ Տե՛ս. **Գաբրիել Միքայելյան**, Տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրությունում կոռուպցիոն որոշ ռիսկերի մասին, Եվրոպական ակադեմիա, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան 2015, էջ 255-260:

Առանձին դեպքերում Հանձնաժողովի գործունեության արդյունքները հասարակության լայն շերտերի համար հասանելի չեն: Մասնավորապես, 2017, 2018, և 2019 թվականների գործունեության ծրագրերում ապրանքային շուկաների վերլուծությանը վերաբերող աղյուսակներում ենթակայաները (ցուցանիշները) չեն ունեցել թվային արժեք (դատարկ են եղել)¹: Որոշ ուսումնասիրություններում տնտեսվարող սուբյեկտների անվանումների փոխարեն այբբենական տառեր են նշված (ինչպես՝ «**Բուսական ծագմամբ յուղերի շրջանառության ոլորտում իրականացված ուսումնասիրության արդյունքները, 2022թ.**»): Շատ դեպքերում նման վարքագիծը «բացատրվում» է առևտրային գաղտնիքի առկայությամբ:

Նախ, Հանձնաժողովի գրեթե բոլոր նիստերը դռնբաց են, և վարույթին առնչվող ամբողջ տեղեկատվությունն ու որոշումներն էլ այդ նիստի ընթացքում հայտարարվում են տնտեսվարող սուբյեկտներին՝ ԶԼՄ-ների ներկայացուցիչների ներկայությամբ: Առավել ևս, եթե գերիշխող դիրք ունեցող կամ հակամրցակցային գործողությունների մասնակիցների մասին է խոսքը, ապա այդ տնտեսվարողների գործունեության գնահատականի ցուցանիշները և դրանց փոփոխությունները պետք է թափանցիկ լինեն (շահութաբերության մակարդակը, ինքնարժեքի փոփոխվող տարրերի մեծությունները և (կամ) դրանց տեսակարար կշիռները ինքնարժեքում: Հետևաբար, առևտրային գաղտնիքի մասին խոսք չի կարող լինել:

Երկրորդ, Հանձնաժողովը առևտրային կազմակերպություն չէ, և նրա ուսումնասիրության արդյունքները և վերլուծությունները, որոնք հիմնված են բաց տեղեկատվության վրա, չեն կարող առևտրային գաղտնիք պարունակել: Եթե դրա մեջ եղած տեղեկատվությունը ԶԼՄ-ների ներկայացուցիչների համար բաց է, ապա այն նաև պետք է բաց լինի հասարակության լայն շերտերի համար:

¹ Ներկայումս Հանձնաժողովի կայք-էջից հեռացվել են տարեկան գործունեության նրա բոլոր ծրագրերը (վերջին անգամ դիտվել է 10.07. 2025թ.):

Մասնագիտական սխալներ, հակասական դրույթներ և անճշտություններ կան Հանձնաժողովի տարեկան գործունեության ծրագրերում, հաշվետվություններում, նախագահի ելույթներում (կառավարության նիստերում, մամլո ասուլիսներում և այլ հրապարակային ելույթներում): Ասվածը մերկապարանոց չհնչելու համար բերենք մեկ-երկու օրինակ: Այսպես, Հանձնաժողովի 2014 թվականի տարեկան գործունեության ծրագրի «Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը» բաժնում, որպես 2014 թվականի միջոցառում, նշված է. «կենտրոնացվածության ցուցանիշների դինամիկայի դիտարկում՝ և կենտրոնացվածության ուժեղացման դեպքում մրցակցության զարգացման համար անհրաժեշտ միջոցների մշակում» (էջ 17): Ծրագրով նախատեսված այս միջոցառումը ենթադրում է առանձին ապրանքային շուկաներում համակենտրոնացման մակարդակների դինամիկան ուսումնասիրել և միայն դրանից հետո եզրակացնել՝ որևէ ապրանքային շուկայում «միջոցներ մշակելու» անհրաժեշտություն կա՞, և դրան անդրադարձ կատարել 2014 թվականի տարեկան գործունեության հաշվետվության մեջ: Սակայն նշված հաշվետվության ո՛չ «Ապրանքային շուկաների վերլուծություն» գլխում, ո՛չ էլ «Տնտեսական մրցակցության կարգավորման և վերահսկման ուղղությամբ իրականացված միջոցառումները» գլխում այդ մասին ոչ մի ակնարկ չկա: Նույն հաշվետվության 27-րդ էջի նախավերջին պարբերությունում գրված է. «Հանձնաժողովը 2014 թվականի ընթացքում հայտնաբերել է ... անբարեխիղճ մրցակցության գործողության դրսևորման մի շարք դեպքեր, որոնք ներկայացված են ստորև»: Սակայն «ստորև» ոչ մի դեպք չի բերված:

Առաջ անցնելով նշենք, որ Օրենքի նոր տարբերակը գործողության մեջ մտնելուց հետո նույնպես Հանձնաժողովն ապրանքա-

յին շուկան վերլուծելիս (դրա ապրանքատեսակային սահմանը որոշելիս) թույլ է տվել նույն մեթոդական սխալը¹:

Օրենքի առաջին տարբերակի մեծ բացթողումներից մեկը դրանում պետական օժանդակության հարցերը չկարգավորելն էր: Դրա պատճառով իշխանության պետական ու տեղական ինքնակառավարման մարմինները տնտեսվարող սուբյեկտներին մեծ թվով օժանդակություններ են ցույց տվել՝ հաշվի չառնելով դրանց ազդեցությունը ապրանքային շուկաներում մրցակցային միջավայրերի վրա: Վերոհիշյալ հանգամանքներից ելնելով և միջազգային փորձագետների խորհրդով՝ 2007 թվականի փետրվարի 22-ին Ազգային ժողովը Օրենքը լրացրել է «5-1 Պետական օժանդակությունը» գլխով, որով սահմանել է «պետական օժանդակություն» եզրույթը, թույլատրվող և արգելվող պետական օժանդակության դեպքերը, պետական օժանդակություն ստանալու համար կարգավորող մարմնից եզրակացություն ստանալու անհրաժեշտությունը, ինչպես նաև արգելված պետական օժանդակություն ստանալու պատասխանատվության միջոցները:

Չնայած պետական օժանդակության կարգավորումը բարենպաստ մրցակցային իրավիճակ ստեղծելու կարևոր գործիքակազմներից մեկն է, բայց օրենքում համապատասխան լրացում կատարելուց հետո տարիներ շարունակ Հանձնաժողովը պետական օժանդակության ոչ մի դեպք չի քննարկել²: Պատճառը՝ ոչ թե նման

¹ Տե՛ս, օրինակ, Բուսական ծագմամբ յուղերի շրջանառության ոլորտում իրականացված ուսումնասիրության արդյունքները: https://competition.am/wp-content/uploads/2023/03/Study_vegetableoilmarket.pdf

² Կառավարությունը 2020 թվականի մայիսի 20-ին ընդունել է «Պետական օժանդակություն տրամադրած մարմինների կողմից մրցակցության պաշտպանության հանձնաժողովին տեղեկատվության տրամադրման կարգը, ձևն ու ժամկետները սահմանելու մասին» թիվ 784-Ն որոշումը: Դրա հիման վրա օժանդակություն տրամադրող 12 պետական մարմին (Էկոնոմիկայի, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունները, Ոստիկանությունը, Պետական գույքի կառավարման կոմիտեն և մի շարք այլ մարմիններ) Հանձնաժողով են ներկայացրել տրամադրված շուրջ 74 920 պետական օժանդակության

օժանդակությունների բացակայությունն է (նման օժանդակությունները բազմաթիվ են), այլ՝ Հանձնաժողովի կողմից դրանք «չտեսնելը»: Իսկ իրական պատճառը՝ պետական կարգավորող մարմնի ոչ լիարժեք ինքնավարությունն է:

Միայն 2023 թվականին առաջին անգամ իրականացվել է արգելված պետական օժանդակության վերաբերյալ վարույթ, որի արդյունքում պետական մարմնի նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց: Հանձնաժողովը վարույթի արդյունքում պարզել էր, որ ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը (ՀՀ ԱԱՊ) հանդիսանալով ապրանքի ծագման երկրի հավաստագրերի տրամադրման լիազոր մարմինը և լինելով այդ գործընթացի պատասխանատուն, օրենքով իրեն վերապահված գործառույթի իրականացման համար անհրաժեշտ ապրանքի ծագման երկրի փորձաքննությունների իրականացումը վերապահել է «Արմէքսպերտիզա» ընկերությանը¹: Վարույթի արդյունքում արձանագրվել էր, որ ՀՀ ԱԱՊ-ի կողմից օրենքով իրեն վերապահված գործառույթի, մասնավորապես՝ ապրանքի ծագման երկրի հավաստագրերի տրամադր-

վերաբերյալ տեղեկատվություն: Ներկայացված տեղեկատվության հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է տեղեկատվության հավաքագրման, Օրենքի իմաստով առերևույթ պետական օժանդակություն հանդիսացող օժանդակությունների առանձնացման և պետական օժանդակության միասնական գրանցամատյանում առանձնացված տեղեկատվության մուտքագրման աշխատանքներ՝ հետագայում դրանց ex post գնահատման նպատակով (տե՛ս ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2021 թվականի տարեկան հաշվետվություն https://competition.am/wp-content/uploads/2022/06/%D5%8E%D5%A5%D6%80%D5%BB%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%E2%80%94%D5%84%D5%8A%D5%80_%D5%8F%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%80%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6_2021.pdf)

1 «Արմէքսպերտիզա» ընկերությունը հիմնադրվել է 2002 թվականի մայիսի 17-ին, որի կանոնադրական կապիտալի 100 տոկոս փայաբաժնի սեփականատեր և հիմնադիր մինչև 2010 թվականի հունվարի 22-ը հանդիսացել է ՀՀ ԱԱՊ-ն: 2010 թվականին «Արմէքսպերտիզա» ընկերությունը մասնավորեցվել է՝ փորձաքննությունները շարունակել է իրականացնել բացառապես «Արմէքսպերտիզա» ընկերությունը (տե՛ս ՏՄՊ-ի 2023 թ. տարեկան գործունեության հաշվետվությունը, էջ 18-19): https://competition.am/wp-content/uploads/2024/07/ARM_FinalApproved_Competition_Annual_Report_24.pdf

ման շրջանակում փորձաքննությունների իրականացումը «Արմ-էքսպերտիզա» ընկերությանը պատվիրարկումը հանգեցրել է այդ ծառայության մատուցման շուկայում մրցակցության արգելմանը՝ սահմանափակելով այլ սուբյեկտների կողմից համանման գործունեություն իրականացնելու հնարավորությունը¹:

Ինչպես արդեն նշել ենք, Օրենքում կատարված որոշ փոփոխություններ բացասական դեր են խաղացել մրցակցության պաշտպանության խնդիրները լուծելու առումով: Դրանցից մեկն է՝ 2011 թվականի (12.04) փոփոխությունն է (06.05.2011, ՀՕ-137), որով Հանձնաժողովը «ազատվել» է կենտրոնացված գրանցամատյան վարելու պարտականությունից: Դրա պատճառով գերշխող դիրքի չարաշահումները և հակամրցակցային հարաբերությունները կանխարգելու հնարավորությունները նվազել են:

Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի 7 անդամին (ներառյալ նախագահին և նրա տեղակալին) նշանակել է ՀՀ նախագահը: Ի վերջո, Հանձնաժողովի անդամների նշանակումը կատարվում է իրավասու անձի ճանաչած շրջապատից: Պատահական չէ, որ շատ դեպքերում հանրությունը ոչ միշտ է դրական գնահատում այս կամ այն նշանակումը: Մեր կարծիքով, օրինակ, մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովում 6 անգամ կատարված՝ Հանձնաժողովի նախագահի նշանակումներից միայն մեկի պարագայում կարելի է այն հաջողված համարել¹: Նույնը (ավելի լավ կամ վատ) կարելի է ասել հանձնաժողովի մյուս անդամների նշանակման վերաբերյալ: Առանձին դեպքերում, մյուս անդամների նշանակման ժամանակ «կարևորվել է» Հանձնաժողովի նախագահի կարծիքը, ինչը, կոլեգիալ մարմինների ձևավորման պարագայում որոշումների կայացման օբյեկտիվությունն ապահո-

¹ Նույն տեղում:

վելու տեսանկյունից, սխալ է: Հանձնաժողովի նախագահը հակված է հանձնաժողովի անդամ «անցկացնել» իր շրջապատից (որպես կանոն, Հանձնաժողովի աշխատակազմից, որին ինքն է ժամանակին աշխատանքի ընդունել²): Իսկ դա Հանձնաժողովի նախագահին հնարավորություն է տալիս Հանձնաժողովի որոշումներում «իր լրացուցիչ ձայնն ունենալ»: Պատահական չէ, որ այդ որոշումներում վճռական է լինում այդ պետական մարմնի նախագահի կարծիքը:

Կարծում ենք՝ օրենսդրական բաց է, որ Հանձնաժողովի չվերանշանակված անդամները (ներառյալ նրա նախագահը և տեղակալը) հանրության առջև հաշվետվությամբ հանդես չեն եկել, միաժամանակ, չվերանշանակվելու պատճառների վերաբերյալ հանրությանը կամ թեկուզ այդ անձանց չեն տեղեկացնում: Շատ կարևոր է, որ առավել անկաշկանդ և անաչառ լինելու համար Հանձնաժողովի անդամները չպետք է պատկանեն որևէ կուսակցության, այսինքն՝ չգրադվեն քաղաքականությամբ: Այլ կերպ ասած՝ հարկատուներիս հաշվին գործող պետական անկախ մարմնի ներկայացուցիչները, իրենց հիմնական գործառույթը թողած (թեկուզ և իրենց հաշվին արձակուրդ վերցնելով), չգրադվեն ընտրական քարոզարշավով:

Հանձնաժողովի մասնագիտական կարողությունների զարգացմանը էապես խոչընդոտում է դրա ձևավորման մեխանիզմը: Օրենքի առաջին տարբերակում (մինչև 30.30.2021 թվական) դրա անդամների նկատմամբ չի եղել արհեստավարժության որևէ պահանջ (բացառությամբ բարձրագույն կրթության ունենալուց): Միակ պահանջն այն է, թե ովքե՞ր չեն կարող լինել Հանձնաժողովի անդամ:

¹ Հեղինակներից՝ Մ.Միքայելյանի համոզմունքը ձևավորվել է 8 տարի ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի անդամ աշխատելու տարիներին:

² Իրավական առումով՝ աշխատակազմում աշխատողը մրցույթի հիման վրա է աշխատանքի անցնում: Գործնականում միայն առանձին դեպքերում է, որ անձը կկարողանա աշխատանքի անցնել առանց նախագահի նախնական համաձայնության:

Որոշակի փոփոխություն եղավ Հանձնաժողովի անդամներին ներկայացվող պահանջներում¹: Օրենքի 20-րդ հոդվածը գործում է նոր խմբագրությամբ, համաձայն դրա 3-րդ մասի՝ Հանձնաժողովի անդամը նաև, բացի բարձրագույն կրթությունից, պետք է ունենա առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ (որից առնվազն երեք տարին՝ ստորաբաժանումների համակարգման գործառնություններով օժտված կամ ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում) և տիրապետի հայերենին: Հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը պետք է ունենա բարձրագույն իրավաբանական, առնվազն մեկը՝ բարձրագույն տնտեսագիտական կրթություն: Միաժամանակ սահմանափակվում է Հանձնաժողովի անդամի տարիքային շեմը՝ մինչև 65 տարին լրանալը (*Ընդունվել է 23.03.2018, 29.03.2018, ՀՕ-249*):

Բիարկե, փորձ է արվել որոշ չափով արհեստավարժության պահանջներ ներկայացնել: Այնուամենայնիվ, լրացուցիչ պահանջները բավարար չեն արհեստավարժ Հանձնաժողով ձևավորելու համար: Պատահական չէ, որ պետական մարմնի հետագա գործունեությունը ևս գերծ չէ մասնագիտական սխալներից և բացթողումներից: Իսկ Հանձնաժողովի անդամի ընտրության (կամ նշանակման) դեպքում տարիքային սահմանափակում մտցնելը հակասում է երկրի հիմնական օրենքին (հոդված 29, Խտրականության արգելքը) և աշխատանքային օրենսգրքին (հոդված 3.1., Խտրականության արգելումը): Առավել ևս, որ Հանձնաժողովի գործունեության զգալի մասը վերլուծական, ստեղծագործական բնույթի է: Իսկ վերլուծական, ստեղծագործական և գիտական աշխատանքը տարիների հետ միասին աշխատողներին նոր հմտություններ ու կարողություններ է ավելացնում:

¹ Տե՛ս 2018 թվականի մարտի 23-ին ընդունված «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքը (29.03.2018, ՀՕ-249-Ն):

Հանձնաժողովի անդամի նկատմամբ ներկայացվող պահանջը անփոփոխ է մնացել նաև Օրենքը նոր խմբագրությամբ ընդունվելուց հետո:

Առանձին տնտեսվարողների կողմից նույնատեսակ իրավախախտումների բազմակի կատարմանը նպաստել է ոչ միայն Հանձնաժողովի բարյացակամ վերաբերմունքը, այլև՝ օրենսդրի կողմից առանձին օրենսդրական փոփոխությունները: Մասնավորապես, Օրենքի 37-րդ հոդվածի (Խախտումով ստացվող շահույթը) խմբագրումը (Հանձնաժողովի որոշումը չկատարելը, խմբ. 31.05.2005 ՀՕ-91-Ն), որը հետագայում ուժը կորցրել է (12.04.2011 ՀՕ-137-Ն): Նախկինում իրավախախտող սուբյեկտը Հանձնաժողովի որոշմամբ պարտավոր էր խախտումով ստացած շահույթը փոխանցել պետական բյուջե: Նշված հոդվածի խմբագրումից հետո տնտեսվարողին որոշակի դեպքերում ձեռնտու էր Հանձնաժողովի նշանակած տուգանքը վճարելը և նույն իրավախախտումը շարունակելը¹:

Թերևս Օրենսդրության աչքի ընկնող բացթողումներից մեկը՝ Հանձնաժողովի պարտականություններից տարեկան գործունեության ծրագիրը մշակելու և այն Ազգային Ժողովում ներկայացնելու պահանջը հանելն է²: Դրա հետևանքով՝ Հանձնաժողովը ծրագրային որևէ դրույթը չկատարելու մտահոգությամբ «կաշկանդված» չի լինում: Հետագայում Օրենսդիրը՝ 2024 թվականի դեկտեմբերի 4-ին Օրենքի 48-րդ հոդվածում լրացում կատարելով (մաս 1.1), Հանձնաժողովին Ազգային ժողովի հետ «առերեսվելու» հնարավորություն է տվել՝ պարտավորեցնելով հաղորդում ներկայացնել, որը պետք է քննարկվի Ազգային ժողովում³: Բնականաբար այդ քննար-

¹ Խոսքը վերաբերում է միայն անբարեխիղճ մրցակցությանը:

² «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, (օրենքը խմբ. 03.03.21, ՀՕ-92-Ն)

³ Տե՛ս «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին (13.12.2024 ՀՕ-485-Ն: <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=9531&lang=arm>

կումների ժամանակ Հանձնաժողովի նախագահին երբեմն նաև հանձնաժողովի գործունեության վերաբերյալ որոշակի մասնագիտական հարցեր կուղղվեն: Բայց, այնուամենայնիվ, այդ լրացումը չի փոխարինի տարեկան գործունեության ծրագրային դրույթեր ներկայացնելու պարտականությանը:

Եզրակացություն

Հանձնաժողովն իր 25-ամյա գործունեության ընթացքում ունեցել է ձեռքբերումներ և բացթողումներ:

1. Առկա է պետական կարգավորող մարմին, որը հենց առաջին ամիսներից զսպող (բայց ոչ՝ չարաշահումը բացառող) դեր խաղաց ապրանքային շուկաներում շուկայական իշխանություն ունեցող ֆիրմաների համար :

2. Հանձնաժողովի հարուցած առաջին վարչական վարույթի շնորհիվ վերացվեց մարգպետարանի այն որոշումը, որով «ջերմուկ» հանքային ջրերի շշալցմամբ զբաղվող մի շարք փոքր և միջին ձեռնարկությունների համար խախտվել էր ազատ և արդար մրցակցելու հնարավորությունը:

3. Հանձնաժողովը բացահայտել է մի շարք հակամրցակցային համաձայնություններ, գերիշխող դիրքի չարաշահումներ, բազմաթիվ անբարեխիղճ մրցակցության դեպքեր:

4. Օրենքի ընդունումից հետո առաջին 5-6 տարիներին Հանձնաժողովը ձևավորվեց ու կայացավ, և նրա գործունեությունն, ընդհանուր առմամբ, կարելի է դրական գնահատել:

5. Հանձնաժողովի գործունեության կարևոր գնահատականներից մեկը բաց, հրապարակային և թափանցիկ գործունեության համար Հայաստանում Միացյալ Թագավորության դեսպանատան և ԱՄՆ-ի՝ միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ անցկացվող ամենամյա մրցանակաբաշխության ժամանակ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը՝ որպես լավա-

գույնս կիրառած պետական գերատեսչություն ճանաչելն է, որի համար որպես թափանցիկության խորհրդանիշ՝ «ոսկե» բանալի և վկայական է հանձնվել Հանձնաժողովին (09.12.2005թ.) :

6. Օրենքի 6-րդ հոդվածում կարևոր լրացում է կատարվել (28.06.2002). Հանձնաժողովի իրավասությունների մեջ ավելացվել է գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանի վարման կարգը սահմանելու իրավասությունը, որը զգալիորեն սահմանափակեց գերիշխող դիրքի չարաշահումները: Սակայն Օրենքում 2011 թվականին (12.04) կատարված փոփոխությամբ Հանձնաժողովն «ազատվել» է կենտրոնացված կենտրոնացված գրանցամատյան վարելու պարտականությունից՝ դժվարացնելով գերիշխող դիրքի չարաշահումների և հակամրցակցային համաձայնությունների բացահայտումը:

7. Հանձնաժողովի գործունեության մեջ նկատվել է մասնագիտական սխալ, որը գործունեության առաջին տարում և հետագա տարիների ընթացքում էլ կրկնվել է: Մասնավորապես, ասվածը վերաբերում է ապրանքային շուկաների սահմանների որոշմանը: Դրա պատճառով շուկայում իրական գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների բաժինը արհեստականորեն նվազեցվում է և գերիշխող դիրք ունեցող(ներ)ի չարաշահումները չեն բացահայտվում:

8. Հանձնաժողովի մասնագիտական կարողությունների զարգացումը էապես խոչընդոտվում է դրա ձևավորման մեխանիզմի պատճառով: Օրենքի առաջին տարբերակում (մինչև 30.30.2021 թվական) դրա անդամների նկատմամբ չի եղել արհեստավարժության որևէ պահանջ (բացառությամբ բարձրագույն կրթության ունենալուց): Միակ պահանջն այն է, թե ովքե՞ր չեն կարող լինել Հանձնաժողովի անդամ:

9. Հանձնաժողովի անդամներին ներկայացվող պահանջներում օրենսդիրը որոշակի փոփոխություն կատարեց 2018 թվականին (23.03): Մասնավորապես, Հանձնաժողովի անդամը, բացի բարձ-

րագույն կրթությունից, պետք է ունենա առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ (որից առնվազն երեք տարին՝ ստորաբաժանումների համակարգման գործառույթներով օժտված կամ ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում) և տիրապետի հայերենին: Հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը պետք է ունենա բարձրագույն իրավաբանական, առնվազն մեկը՝ բարձրագույն տնտեսագիտական կրթություն: Սակայն կատարված փոփոխությունները բավարար չեն Հանձնաժողովը արհեստավարժ կադրերով համալրելու համար: Միաժամանակ, սահմանափակվում է Հանձնաժողովի անդամի տարիքային շեմը՝ մինչև 65 տարին լրանալը: Դրանով կայացած մասնագետների «ճանապարհն են փակում»:

10. Հանձնաժողովի անդամի նկատմամբ արհեստավարժության մակարդակի վերաբերյալ օրենսդրի պահանջը չփոխվեց նաև Օրենքի խմբագրված տարբերակն ընդունելուց հետո (30.30.2021):

11. Օրենքի խմբագրված տարբերակում հանվեց Ազգային ժողովում՝ Հանձնաժողովի տարեկան գործունեության ծրագիր ներկայացնելու պահանջը: Դրանով նվազեցվեց հասարակության առջև Հանձնաժողովի ծրագրային դրույթների կատարման պարտականությանը պայմանավորված պարտականությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հովհաննիսյան Դ.Ա., Մրցակցային միջավայրը և դրա կարգավորման ուղիները Հայաստանի Հանրապետության ազրոպարենային ոլորտում, Եր., 2023, էջ 203:

2. Գաբրիել Միքայելյան, Տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրությունում կոռուպցիոն որոշ ռիսկերի մասին, Եվրոպական ակադեմիա, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան 2015, էջ 255-260:

3. Մ.Վ.Միքայելյան, Տնտեսական մրցակցության և մենաշնորհների պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Եր. 2005, 254 էջ:

4. Արտակ շաբոյան, Արման Մանասերյան, Մանրածախ առևտրի ոլորտում մրցակցության խնդիրները և դրանց լուծման ուղիները, Բանբեր Հայաստանի պետական համալսարանի, 2018, թիվ 3 (51), 47-56 էջեր:

5. С.Авдашева, А.Шаститко, Экономический анализ в делах о нарушении закона «О защите конкуренции», Вопросы экономики, 2011, N 2, с. 124.

6. II Всероссийский съезд представителей малых предприятий: Документы и материалы съезда, с. 18 .

7. Нагний В.А., Субъекты хозяйствования и дискриминация власти, Конкуренция, Вестник антимонопольного комитета Украины, 2002, N 1, с.44.

8. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 06.11.2000):

9. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (Ընդունվել է 23.03.2018, 29.03.2018, ՀՕ-249-Ն):

10. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենք (14.07.2025, ՀՕ-205-Ն):

11. Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, և մյուս կողմից՝ Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների (15 երկիր) միջև 1996 թ. ապրիլի 22-ին ստորագրված «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը» (ուժի մեջ է մտել 01.07.1999):

12. Հանձնաժողովի 2001 թվականի տարեկան գործունեության հաշվետվությունը, https://competition.am/wp-content/uploads/2022/03/Report_2001.pdf:

13. ՀՀ ՏՄՊՊՀ-ի 2005 թվականի տարեկան գործունեության հաշվետվություն <https://competition.am/wp-content/uploads/2022/03/Report2005.pdf>

14. ՀՀ ՏՄՊՊՀ-ի 2001 թվականի տարեկան գործունեության հաշվետվություն, https://competition.am/wp-content/uploads/2022/03/Report_001.pdf:

15. ՀՀ ՄՊՀ-ի 2021 թվականի տարեկան գործունեության հաշվետվություն <https://competition.am/wp-content/uploads/2022/03/Report2005.pdf>):

16. Բուսական ծագմամբ յուղերի շրջանառության ոլորտում իրականացված ուսումնասիրության արդյունքները: https://competition.am/wp-content/uploads/2023/03/Study_vegetableoilmarket.pdf

16. ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2021 թվականի տարեկան հաշվետվություն https://competition.am/wp-content/uploads/2022/06/%D5%8E%D5%A5%D6%80%D5%BB%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%E2%80%94%D5%84%D5%8A%D5%80_%D5%8F%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%80%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6_2021.pdf):

17. ՀՀ կառավարությունը 2020 թվականի մայիսի 20-ի «Պետական օժանդակություն տրամադրած մարմինների կողմից մրցակցության պաշտպանության հանձնաժողովին տեղեկատվության տրամադրման կարգը, ձևն ու ժամկետները սահմանելու մասին» թիվ 784-Ն որոշումը:

18. 2018 թվականի մարտի 23-ին ընդունված «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապե-

տորքյան օրենքով լրացումներ և փոփոխություններ կատարելու
մասին ՀՀ օրենքը (29.03.2018, ՀՕ-249-Ն):

19. Договор стран СНГ “О проведении согласованной
антимонопольной политики” от 25.01.2000г./Содружество. Инфор-
мационный вестник совета глав государств СНГ, 2000, N1 (34).

Микаел Микаелян, Габриел Микаелян, Защита экономической конкуренции в Республике Армения (достижения и недостатки) -
Одним из обязательных условий вступления в Всемирную торговую организацию (ВТО) было принятие в Республике Армения Закона «О защите экономической конкуренции». Однако закон был принят только 6 ноября 2000 года и вступил в силу 15 декабря того же года (05.12.2000, ЗР-112). Его принятие предполагало также соответствие другим международным соглашениям, в частности — Соглашению о всеобъемлющем и расширенном партнерстве между Республикой Армения, Европейским Союзом, Европейским сообществом по атомной энергии и их государствами-членами, подписанному 22 апреля 1996 года и вступившему в силу 1 июля 1999 года.

Как член СНГ и Евразийского экономического союза, Армения обязана также привести законодательство о защите конкуренции в соответствие с правовыми актами этих структур. На это указывают, в частности, уведомление Европейской комиссии о определении соответствующего рынка (97/A.372/03), Соглашение между странами СНГ «О проведении согласованной антимонопольной политики» от 25 января 2000 года, а также Решение Высшего Евразийского экономического совета «О модельном законе о конкуренции» (24.10.2013, № 50, Минск).

Государственный орган, регулирующий экономическую конкуренцию, имел как успехи, так и недостатки в своей деятельности. За этот период в Закон было внесено 27 изменений и дополнений, ко-

торые оказали как положительное, так и отрицательное влияние на работу органа.

Цель данного исследования — проанализировать деятельность органа в разные периоды, выявить положительные аспекты и существующие функциональные и законодательные пробелы, а также привлечь внимание государственных структур и законодателя к представленным выводам.

Miqael Miqaelyan, Gabriel Miqaelyan, Protection of economic competition in The Republic of Armenia (achievements and shortcomings) - One of the mandatory conditions for Armenia's accession to the World Trade Organization (WTO) was the adoption of the Law "On the Protection of Economic Competition." However, it was adopted only on November 6, 2000, and entered into force on December 15 of the same year (05.12.2000, HO-112). The adoption of the Law also implied its alignment with international agreements, particularly the "Partnership and Cooperation Agreement" between the Republic of Armenia, the European Union, the European Atomic Energy Community, and their member states, signed on April 22, 1996, and entered into force on July 1, 1999.

As a member of the CIS and the Eurasian Economic Union, Armenia is also obliged to harmonize its competition protection legislation with the legal frameworks of these organizations. This is evidenced by the European Commission's notice on market definition (97/A.372/03), the CIS Agreement "On Coordinated Antimonopoly Policy" (January 25, 2000), and the Decision of the Supreme Eurasian Economic Council "On the Model Law on Competition" (October 24, 2013, No. 50, Minsk). The state authority responsible for regulating economic competition has had both achievements and shortcomings. Over time, the Law has undergone 27 amendments and additions, which have had both positive and negative impacts on the body's performance.

The purpose of this study is to analyze the activities of this authority during different periods, highlight its positive results, identify functional and legislative shortcomings, and draw the attention of governmental bodies and lawmakers to the conclusions presented.

Ուղարկվել է խմբագրություն 09.10.2025թ.

Գրախոսվել է 10.10.2025թ.

Ստորագրվել է տպագրության 15.10.2025թ.